

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 208-Ա

23 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1821-Ա, N 1822-Ա, 1823-Ա, N 1833-Ա, N 1838-Ա, N 1841-Ա, N 1854-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 21-22-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Ֆաբելիկ Ջակավկազյե» ՍՊԸ՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 48/2.
 - 2) «Շոկո» ՍՊԸ՝ ք. Երևան, Արցախի պողոտա 8Բ.
 - 3) «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ՝ ք. Երևան, Սարկավազի 157.
 - 4) «Նոուֆ.ԱՄ» ՍՊԸ՝ ք. Երևան, Ռուբինյանց 2/8.
 - 5) «Անդրանիկ Մինասյան Աշոտի» Ա/Ձ՝ Գյումրի համայնք, Շահումյան 212/7.
 - 6) «Արթուր Գրիգորյան Արշավիրի» Ա/Ձ՝ Գյումրի համայնք, Շահումյան 212/4.
 - 7) «Շուշան Աղասյան Ալբերտի» Ա/Ձ՝ Գյումրի համայնք, Շահումյան 206.
 - 8) «Մնաց Նիկողոսյան» Ա/Ձ՝ Գյումրի համայնք, Շահումյան 173.
 - 9) «Լիլիթ Ասլանյան» Ա/Ձ՝ Գյումրի համայնք, Գորկու 50/2.
 - 10) «Աիդա Ոսկանյան» Ա/Ձ՝ ք. Կապան, Շահումյան 20.
 - 11) «Ավտոհոմ» ՍՊԸ՝ ք. Կապան, Շահումյան 18/2.
 - 12) «Սմելա Մարտիրոսյան» Ա/Ձ՝ ք. Կապան, Շահումյան 5 Ա.
 - 13) «Էլենա Բալասանյան» Ա/Ձ՝ ք. Կապան, Շահումյան 9/16:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 23/07/20 16:42:36 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ